Վերգետնյա անցումների կառուցման ներդրումային նախագիծ

Ծրագրի նկարագիրը

Ծրագրի նպատակն է Երևանում կառուցել վերգետնյա անցումներ, որոնք առավել հարմարավետ, մատչելի և անվտանգ պայմաններ կստեղծեն մայրաքաղաքի բնակիչների և հյուրերի տեղաշարժի համար, կնպաստեն անվտանգ երթևեկությանը: Ծրագրով նախատեսվում է նաև վերելակի տեղադրում՝ տեղաշարժման սահմանափակ հնարավորություններ ունեցողների համար վերգետնյա անցումից օգտնվելու մատչելության ապահովման նպատակով:
Անցումը կունեն ժամանակակից էներգախնայող լուսադիոդային լուսավորության համակարգ:
Կքննարկվի նաև հեծանվորդների համար համապատասխան հարմարություններ ստեղծելու հնարավորությունը:

Տեխնիկական ցուցանիշներ

Հիտիոտն անցման թռիչքային կառուցվածքի մաքուր լայնությունը նախատեսվում է 2.5 մետր, աստիճանավանդակներինը՝ 1.5 մետր, ընդկամրջյա լուսավոր բացվածքը՝ 5 մետր:

Ծրագրի ժամկետներ	Ծրագրի իրականացման ժամկետը 1 տարի է:
Ծրագրի արժեքը	Մեկ վերգետնյա անցման կառուցման արժեքը կկազմի շուրջ 150 հազ. ԱՄՆ դոլար:
Ներդրումների ձևը և հիմնական պայմանները	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակում: Քաղաքապետարանը հնարավորություն կընձեռի վերգետնյա անցման կողային ճակատների վրա տեղադիրների միջոցով տեղաբաշխել արտաքին գովազդ՝ վերջինիս տեղադրման թույլտվության համար տեղական տուրքի և նշված տարածքների տրամադրման վարձավճարների գումարների հատուցմամբ՝ համապատասխան ժամանակահատվածի համար՝ հաշվի առնելով ներդրումների չափը: Ներդրողին կառաջարկվեն համապատասխան վայրեր վերգետնյա հետիոտնային անցումներ կառուցելու նպատակով:
Ներկա իրավիճակ	Առկա է հայեցակարգային նախագիծ: